



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

« 13 » մայիսի 2020 թվականի N: 137-Վ ք.Գյումրի

«ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՐԶԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ  
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ  
ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՅՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 224-Ն որոշմամբ հաստատված «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման)» ընդհանուր կարգի 12-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2007 թվականի հունվարի 26-ի N 24-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցույթի անցկացման կարգի» 6-րդ կետի դրույթները.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ձևավորել «Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2020 թվականի մայիսի 14-ին անցկացվող մրցույթի մրցութային հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ



Իսկականի հետ ճիշտ է՝

Հավելված՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի  
2020 թվականի մայիսի 13-ի N: 137-Ա որոշման

«ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՐԶԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ  
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ  
ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-ԻՆ ԱՆՅԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ  
ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

- |                    |                                                                                                                                                                      |
|--------------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Ալբերտ Մարգարյան   | - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ, հանձնաժողովի նախագահ,                                                                 |
| Հովհաննես Մաթոսյան | - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի խորհրդական,                                                                                                               |
| Տիգրան Մինասյան    | - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի խորհրդական,                                                                                                               |
| Մուշեղ Մարգարյան   | - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գորահավմաքային նախապատրաստության բաժնի պետի ժամանակավոր թափուր պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցնող, |
| Նարինե Մինասյան    | - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար:                                                              |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

